կու լոյսերը, երկու բեւեռական աստղների նման, հակառակ կողմից կանգնած էին միմեանց հանդէպ:

Այժմ մենաւոր պահակի աչքերը սկսեցին շարժել: Նա երբեմն նայում էր առաջինի, երբեմն նայում էր երկրորդի վրայ:

Շատ չանցաւ, երկու հրեղէն լեզուները աճեցին, աճեցին, եւ երկու ջահերի ձեւ ստացան: Այդ միջոցին նրանք երեւան հանեցին երկու ձեռքեր, որ բռնած ունէին այդ ջահերը, եւ երկու կանացի գլուխներ, մինչեւ կուրծքը: Այդ հերարձակ գլուխները երկու ֆուրիաների նմանութիւն ունէին: Մէկը մանկահասակ էր, միւսը՝ պառաւ: Առաջինի դէմքը ժպտում էր, երկրորդի վրայ երեւում էր կատաղութիւն: Այնպէս էր թւում, որ այդ երկու գլուխները, իրանց բռնած ջահերով, կախուած լինէին օդի մէջ: Բայց զօրեղ աչքը կարող էր նկատել, որ նրանք երեւում էին երկու բարձր աշտարակների կատարից, որոնց վերին մասը լուսաւորուած էր ջահերի լոյսով: Երկու աշտարակները կազմում էին մի ամրոցի ճակատի երկու անկիւնները:

Այդ երեւոյթը այնքան կարճատեւ եղաւ եւ այնպէս շուտ անցաւ, որ տեսնողը կը կարծէր, թէ երեւակայութեան մի խարդաւանք է:

Այդպէս չկարծեց մենաւոր պահակը: Նա հանդարտ վեր կացաւ իւր նստած տեղից, մօտեցաւ ձիաներից մէկին եւ սկսեց սանձը գլուխը դնել: Նրա սուլելու ձայնից՝ մինարեթի մէջ նստած մարդիկ նոյնպէս ոտքի ելան եւ իւրաքանչիւրը լուռ մօտեցաւ իր ձիուն: Մի քանի րոպէից յետոյ ամբողջ ասպահումբը անյայտացաւ գիշերային խաւարի մէջ:

Ձիւնը շարունակում էր տեղալ: Այդ միջոցին բարձրացաւ մի թեթեւ քամի, որ սկսեց տարուբերել ձնային հոսանքը: Քամին հետզհետէ սաստկանում էր, սպառնալով բուք, բորան: Ցուրտը կարծես ածելիի նման կտրատում էր մարդու երեսը, ականջները, ձեռքերը: Թուքը բերանի մէջ սառցնելու չափ ցուրտ էր:

Փոթորիկը աւելի սաստկացաւ: Քամին մռնչում էր եւ, պտտացնելով ձնային տարափը օդի մէջ, նոյն մետալական ձայնն էր հանում, որպէս հնչում էր նա, երբ ուժգին սաստկութեամբ անցնում էր արտերի հասունացած հասկերի վրայով:

Անցաւ մի կամ երկու ժամ:

Նոյն կողմում, որտեղ երեւացին երկու ջահերը, այժմ տեղ-տեղ բարձրանում էին հազիւ նշմարելի կապտագոյն բոցեր: Երբեմն լսւում էր խուլ դղրդիւն: Կարծես մի շինուածք քանդւում էր, քայքայւում էր: Քամին խլացնում էր բոլոր ձայները, իսկ ձիւնային փոթորիկը երբեմն ծածկում էր բոցերի նշոյլնե-